

վերայ, դրուած վստահութեամբ իւր փորձ կարողութեանն, և միւս կողմանէ փառաւոր և արժանաւոր վարձ նորա արդեանց, որոյ համար իսկ կու տար զայն անոր մեծն Սահակ, զոր և ինքն իւր առանձնութեան տեղի ընտրեց, և բնակեցաւ՝ վերոյիշեալ մկրտութեան ժամանակ ծագած երկնաւոր լուսոյ տեղւոյն մէջ, իւր սիրելւոյն Եզնկայ ջերմ խնամոց տակ, յանձնելով իւր էշխանութիւնը Մեսրոբայ, ուր և աւանդեց իւր սրբամաքուր հոգին:

Շարունակելի

Հ. Վարդան Սումեմեան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես ԵԱ. յ' էջ 135)

16. * Աթխար.

Ուղիղն իթխիր, արարացի բառ, հայերէն վաղմեռու: Գրուած է և Աղխար ի վաստակոց գիրս (ԳԼ. 384):

17. Աժրի.

Պոնտոսի կողմերը ռամկօրէն այս անուամբ յիշուի Հաճարի ծառն: Տես զայս:

18. Ալաժարի կամ Ալաժարի.

Մշեցոց շատ ծանօթ բոյս կամ թուփ մ'է. գընձի նման մանր պտուղ կու բերէ, զոր շորցուցած աղալով՝ դեղին ներկ կու հանեն, մորթ գունաւորելու: Ամիրտող վաթայ անծանօթ է այս բոյսս, բայց իրմէ քիչ մի հին հեղինակ. Մատթէոս Վ. աղակերտ Գրիգորի Տաթեւացւոյ, իր վեցօրէից մեկնութեան գրոց մէջ (ԳԼ. Ի) կ'ըսէ. « Ամենայն բոյսք բնական որակ ունին կանաչ. և այսմ գունոյ պատճառ » ուսանիմք ի ներկոցէ անտի. քանզի գճօրունն (որոյ ցեղէն է Ալաժարին ալ) » և զլեզակն յիրար խառնեն, այսինքն զսեւան և զկարմիրն, ծնանի լուրջ » (գոյն). իսկ յորժամ յԱլաժարն ձգեն՝ որ է դեղին, կանչի (կանաչանայ). և » նիւթն բնական սպիտակ լինի »: — Եւրոպացիք ալ այս անուամբ կոչեն Ali-zari, այլ և Արեւելեան Տօրուն:

19. Ալանկիտակ.

Որսալ գրուած է, պէտք է կարդալ Սղանկի տակ. տեպ այս անունս, կամ Զրեւանդ կամ Որգնտակ:

20. * Ալատնի.

Ալատնիի Պէլթարայ, որ կոչէ և Լիպարայ, Լ. և Փ. Elatine ի յոյնէն առած (ελαινος, որ է Իդէաին, վասն զի տերեւներն ասոր կու նմանին). իսկ ըստ մեր Ամասիացոյն, « Մէկ ցեղ խոտ մ'է, որ տերեւն սխտորի տերեւ կու նմանի, և » տակն փոքրիկ և բարդ կու լինի, և ինքն մէկ ազգ սխտոր է, և հինգ կամ » վեց ճուղ կ'ունենայ, և յերկայնութիւն մէկ մէկ թիզ կու լինի, և ի ցաններուն » մէջն և ի փոս տեղրանք կու բուսնի. և տերեւին համն ի Քիւթորին համն կու » նմանի », և այլն:

21. Ալի.

Գեղաբունեաց կամ Սեւանայ ծովու եզերաց ծաղկանց և բուսոց կարգին՝ կու յիշէ նոր գրող մի (Տէր Աւետիքեան), առանց բացատրելու:

22. Ալոնի.

Պտուղն ալ Ալոն, կամ Ալոն, ինչպէս կ'անուանեն և թուրքք՝ Հալլոն. հայերէն հնազոյն և հարազատ անունն է Սնձենի կամ Սնձնի. բայց պտուղը պէտք չէ շիտթել Սինձի հետ, որ զատ բոյս կամ՝ բանջար մ'է. ինչպէս նաեւ Ալոն պտուղն ալ ընդ Ալոն բուսոյ: Վաստակոց գիրքն երկու անուանքն ալ մէկտեղ յիշէ (Գլ. ԾԽԵ), « Վասն Սերկեւելի և Սնձենեաց՝ որ է Ալոն. » ուրիշ տեղ ալ (ԾԽԸ) « Տունկը՝ որ ի շաշի Խանխէ լինին (այսինքն հիւղէ մի առաջ եկած) այստեղիկ են, » Խնձորենի, Կեռասենի, Սնձնի, Նունենի, և այլ այսպիսիք: — Լ. Azerolus. Փ. Azérolier, կ'ըսեն նաեւ Pomettes de doux closes. Ռ. Азероловое дерево. հայերէն ալ կ'ըսուի Վլայրի Խնձոր, ուրիշ լեզուաց մէջ ալ Լեռան Խնձոր. ինչպէս նաեւ արաբերէն, ըստ Սմիրտ. « Չարուրի ձապալի, որ է Վլայրի Խնձորն, որ է » Ալուն, որ հայերէն բառով Սնձն », և այլն. Թողումը ուրիշն այս բառին ներքեւ յիշել իր ուրիշ բացատրութիւնն ալ. իսկ հօս յիշենք նոյն անուամբ տարբեր ցեղի՝ բոյս մ'ալ, որ է

23. Ալուն.

« Որ է ինքն, ըստ Սմիրտ. ի Մուխալասային ցեղերուն, որ պարսկերէն Քազնաք կ'անեն », կամ Քազանկ. իսկ Մուխալասայն տեսնենք ի կարգի Մ տառի. այս տեղ այսչափ ըսենք, որ խոտեղէն բոյս է մանր հունտերով, որք շատ բանի և զօրաւոր դեղ կ'ըլլան, ըստ հեղինակին. բայց եւրոպացի գիտունք դեռ չեն ստուգած ինչ ըլլալը, այլ Linaria (Վշատեսակ) բուսոց ցեղէն համարին:

24. Ալոջա, կամ Ալուջա.

Տեսակ մի է վայրենի Սալորի:

25. Ալոց.

Գեղձի տեսակ է, մեծկակ և մուտ:

26. Ալու.

Փաթաթ անուանեալ Գեանախնձորն է, ըստ Մեսր. Թադիադենց (Առաջն. Մանկանց). բայց Ալու պարսկերէն Սալոր կու նշանակէ. ասկէ թերեւս վերոյիշեալն Ալուջա:

27. * Ալպուճ.

Հնդկացիներն պտուղ մ'է, ըստ Բժշկարանի, կամ « Խոտի մի տակ է, որ ի Հընդ-
» կաց կու գայ, և ինքն ի Պուզետան (Orchis) կու նմանի, և սպիտակ կու լինի,
» և ի վերայ սեւուկ կէտկուներ կու լինի, և համն լեղէհամ է: Պէյթար՝ ուս-
կից առած է Ամիրտ. նոյն կու համարի Ալպուճն՝ عالجى Արաբաց Վամ ըսած եղե-
ղանման բուսոյն, որ է Թ. *Акороу. L. Acorus calamus. Ф. Acore:*

28. * Ախախիա կամ Աղաղիա.

Արաբերէն ալ այսպէս կոչուած ըստ *L. Acacia, Ռ. Akadja*, ի յոյն *ακη* բառէ
որ է սուր կամ՝ փուշ, ծառին փշուտ ըլլալուն համար. ինչպէս վկայութիւն քերէ
Ամիրտուլթ ի Գալիենոսէ, որ առէ, թէ « Փուշ ալունի և խէժ ալ ունի »: Բայց
ինքն՝ ըստ Պէյթարի զԱղաղիա համարի Քամուք կամ հոյզ Ղարազ կամ Ղարառ
ըսուած ծառի. « և ոմանք ասեն թէ Խառնուպին ծառին (հըլիւրենի) ըռուպն
» է, և Ղարաղին՝ պարսկերէն Գարզ կ'ասեն (այսպէս Պէյթար ալ, *عرج*) և
» Ղուշղուշ կ'ասեն »: Բայց երբ կարգն գայ ի Ղուշղուշ՝ չի յիշեր զԱղաղիա, այլ
ստորագրութեամբն կ'իմացընէ որ նա Կասիա ծառն է, *Cassia*: — Աղաղիայի
տեղ ոմանք Հիմայ Երակիա կ'ըսեն. իսկ Թ. Աթանասեան Հակակ, չգիտեմ նման
ցընելով թէ ի լոյս:

29. * Ախինոս.

Անունն յայտնէ յունական ծագումն (*Εχίνος* որ ոգին կու նշանակէ). Պէյթար
ալ այսպէս գրէ. « Ինքն խոտ մ'է որ ի զետեղերքն կու բուսնի, և մէկմէկ թիզ
» կու լինի յերկանքն, և տերեւներուն ծայրն ճղքած կու լինի և կամ բաժնած
» կու լինի, և Հինգ ճուղ կու լինի կամ վեց. և ծաղիկն սպիտակ կու լինայ, և
» մանտրկեկ սեւուկ պտուղ կ'ունենայ... Առէ Պատէին թէ այսոր Ախիրոս կ'ա-
» սեն, և Խարտինա, և Չաստար այլ կու տան. և ոմանք ասեն թէ ինքն յիծե-
» ծած ցորենն է՝ որ ի դաշտերն կու բուսնի և ի կոնկնըման յրեզերն. և պտուղն
» սեւ ու մանտր է, և ծաղիկն սպիտակ. և պտուղն ի աշից դեղերն կու մտնէ »:
Այսպէս կու վարդապետեն թէ Գալիենոս և թէ Դիոսկորիտէս, բայց ետքինս
փոխանակ Ախինոսի՝ Երինոս կ'ըսէ, *Ερίνος*, և այս ստոյգ համարուի. *L. Erinos. Ф. Erine*.
որ զանգակաձեւ (*Campanule*) ծաղկանց ցեղէն է:

30. * Ախին.

Այս այլ յոյն *Εχίν* (*Εχίν*) բառէն ծագած է, որ վիշապ նշանակէ, և անոր
նմանութենէն վիշապաղուկս կոչած են, ինչպէս Թուրքարէն ալ անուանի, ըստ
Ամիրտ. « Յաֆի (1) Երդան պաշի, այնոր համար որ պտուղն ի յայն կու նմանի. և
» ինքն խոտ մ'է որ երկան տերեւնի ունի, և ի վրայ փշեր ունի, և ամէն տե-
» բեւի տակ դեղին ծաղիկ ունի. և իր տակն քան զմատն այլ բարակ կու լինի
» և սեւ », և այլն. — *L. Echium. Ф. Vipérine*. Համանիչ կամ համանման
անուամբ Վիշապոսի բոյս մի յիշուի ի Հայս, բայց նոյն է թէ օտարացեղ,
ստուգելի է:

1. Կարծեմ Եփէ, որ նշանակէ պաշտ, իբր սուտ վիշապաղուկս:

31. Ախլախնձոր.

Այս անունն կու լսուի մեր երկրին այլեւայլ կողմեր, բայց էութեանը վրայ չեն միաբան. ըստ Հերակլացոց տեսակ մի Առուոյտ է, *Trifolium pratense*. ըստ Կարմիրբոց՝ Զինծաղիկն է. բայց տես որ Զինծաղիկն ալ այլեւայլ նշանակութիւն ունի: — «Հօրստ Մօրստ... խառներ հետ Ախլախնձորուն», կ'երգէ Դաւիթ Սալաձորցի:

32. * Ախլաւ.

Որ է Ախարսաձ Պէյթարայ, *حاجاج*, որ Երաթացոց երկրագործական զբոսն առած է. անծանօթ բոյս մի Եւրոպացի գիտնոց ալ, որք թզնւոյ տեսակ մի կարծեն: Սմիտ. կու գրէ. «Ինքն ծառ մ'է որ ի չող քաղքնի (տաք երկիրներ) » կու լինայ. և իր յերկանութիւն մարդու մի չաք կու լինայ, և տերեւն նման է թզին տերեւին, և իր ծառն այլ նման է թզին ծառին, և մէջն փռւած կու լինի. և ի վրայ ճղերուն միրգ կ'ունենայ շատ: Պէյթար կ'աւելցնէ, թէ ասոր ճղերուն վրայ տեսակ մի պղտիկ մամուկը կու գոյանան, ճերմակ պատառով, որ երբ պատռտի՝ մամուկը դուրս կ'ելլեն կու վազվզեն, անոր համար մարդիկ կու զգուցնեն պատռներն ուտելու:

33. * Ախաւան.

Որ է Ախաւան կամ Օռաւան Արաբաց *سليطه* L. *Matricaria*. բացատրութիւնն կը թողունք մեր Մ տառին բուսոց կարգին:

34. * Ախունա.

Խորենացոյ աշխարհագրութեան մէջ կու յիշուի յերմանիկն Արաբիա. ըստ այլ օրինակաց Արխունա կամ Ալխունա: Հէհրիմանեանն համարի վայրի Մանաւնիս, *Sinapi silvestris*.

35. Ախրիզան.

Այս գեղեցիկ անուն մի՛ զոր կ'ընծայէ մեզ Մխիթար Գոշ իր Առակաց մէջ, (թիւ ԻԶ և ԻԷ), իմացնելով գեղեցկագոյն ծաղկանց մէկն ըլլալ. վաճն գի կ'ըսէ. « Կամեցան (բոյրք) ինքեանց կարգել թագաւորութիւն... ոմանք ասէին զՇու. » շան լինել, և այլք զԱխրիզան, և բազումք զՀամասպրան, և ամենեցուն հա. » ճոյ թուեցաւ լինել զՀամասպրանն. (ինչ կերպով արդեօք կ'ընտրէին ծաղկունք իրենց զխաւորները): Առակախօսն յետոյ քանի մի մութ նշաններ ալ կու տայ ծաղկին յատկութեանց. « Ախրիզանն երիս ունելով կենդանութիւն յարմատ » ?... իսկ բուսոց թագաւորն (Համասպրամ) « Ընդ ինքեամբ անյայտ և » զԱխրիզանն արար, լուսով նշանի ի գիշերի գտանիլ... և ասէ. Գիտէք, զի » միանգամայն անյայտ ոչ լինիմ, այլ երեւիմ ազօթիք և պահօք խնդրողացն. » նոյնպէս և զԱխրիզանն արարի, զի մի դիւրարհամարելի լինիցի՛ք՝ դիւրա. » գտանելի լեալք. » Խնդրեմք ի բուսաբանից որ իմացնեն մեզ՝ թէ կամ ծաղկները որ ի գիշերի փնտռուին, կամ ի գիշերի յայտնուին. գուցէ ըլլան անոնք որ ի գիշերի կու բացուին, ինչպէս *Mirabilis Jalapa*, Փ. *Belle de nuit*, Կէճէ սէֆա Թուրքաց. կամ անուշահոտն *Pelargonium triste*, որ՝ Տխուր Արագլա.

կտուց թարգմանութի, և զիշերուան դէմ կու բուրէ: — Ստ. Շէհրիման իբրեւ ծանօթ կու նկարագրէ զԱխրիզան, բոյս մի 1¹/₂ ոտնաչափ բարձր, տերեւներն ուռեանայ նման, թանձր և կանաչ, ծաղիկն բաժակաձեւ դեղին ծիրանեգոյն կամ կապոյտ գծերով, որով ճանաչուող կ'երեւի. լատին անունն ալ կու տայ Tri-polium. բայց այս անուամբ բոյս չեն յիշեր բուսաբանք. թերեւս ըլլայ Tropaeolum, զոր ֆրանսէք Capucine կոչեն և Ռ. Насурциѣ. ասոր՝ յիբաւի՝ ոչ միայն տերեւն, ծաղիկն և պտուղն գեղեցկաձեւք են, այլ և արշալուսէ առաջ վերջալուսէ ետեւ կու ցոլկըտայ կամ փայլփայլի, ըստ քննութեան բնաբանից՝ իր մէջ փոսփուրային կամ ծծմբային տարր ունենալով. և այսպէս կըրնայ Ախրիզան մ'ըլլալ. միայն տարակոյս մնայ այս, որ բոյսը՝ երկու կամ երեք դար առաջ միայն Ամերիկոյ Բերու երկրէն յԵւրոպա մտեր և ծանօթացեր է, թէ և ոմանք կարծեր են թէ ի Հնդկաստանէ ալ բերուած ըլլայ. իսկ թէ գոտի մեր երկրին մէջ ալ բնական կամ եկամուտ, դեռ քննելի է:

36. Ածար, կամ Այծար, կամ Այծառ.

Այսպէս կոչեն ոմանք Սեւ Կաղամախին Populus Nigra, բայց ի գրոց է թէ ի ռամկաց լսուած այս անունն, չեմ գիտեր:

37. Ածիկ.

Յորեն է, խոնաւութեամբ ինքնիրեն ծլած կամ ջրի մէջ դրուած՝ կակղացած (1):

38. Ականդուկ.

Անծանօթ և շատ ստուգելի բոյս կամ նիւթ մի կ'երեւի. մեր հին բժշկարանն (ԺԳ դարու գրուած) կ'ըսէ. « Անակցանի՝ (առանց գործիքի) ակուսայ հանել (ոչ) » համար. Թեղոյ-տակի կեղեւ և Ականդուկ՝ մանր աղա, և ի քացախն լից և » խառնէ, և կալ յարեւն՝ որ Թանձրանայ, և դիր ի վերայ ատամանն՝ որ շարժի, » և հանէ »:

39. Ականջախոտ.

Ականջացաւի դեղ. լեղի և եղոտ բոյս մի է, ի լրոյ և ոչ ի գրոց հանդիպուած. նոյնպէս և հետեւեալն՝

40. Ականջուկ.

Ականջի ձեւով ծաղիկ մի. որոյ որպիսութիւնն չէ բացատրուած. Շէհրիմանեանն նոյն համարի ընդ ճաղճղըկի: Բժշկարան մի՝ գոթութեան դեղ գրէ. « ՋԱկըն » յուկ խոտն քաղէ և չորացո և լօսէ. երեք օր հետիւրաց չորս պատառ հացով » տուր », և այլն:

41. Ակար. Ակարոն. Ակիր.

Յոյն անուն, Ἀχόρον, յորմէ Լ. Acorus, Փ. Acor. Պ. Էկիր. իսկ Արաքք, սովորաբար կ'անուանեն Ոռաձ, զոր մերայինք ալ վաճ կամ Ոձ գրած են. իսկ բնիկ հայկական անունը տես ի Քաշիս. — Ակիր կամ Ալլըր, Ակր, անունն ծանօթ է և ի Հայս, իբրեւ անուշահոտ խոտ մի խուրձաձեւ արմատով, լուի դէմ՝ դեղի գործ.

1. Ուրիշ Ածով սկսած անունները տես յ' Այծ:

ածուած. Բայց բոլորովին վերոյիշեալ Ակարի հետ նոյն թէ տարրեր ըլլալն ստու-
գել պիտի. տես և թիւ 27. նոյնպէս և յիշուածն ի բժշկարանի:

42. Ակիրի պտուղ.

Ուր և արարերէնն նշանակուած է Հապ ըլ-Հօլ:

43. Ակուվուկ.

Վայրի վարդ և իր պտուղն. Թ. Գոշլ պոշտնոս: Լաւագոյն հայերէնը տես-
նենք 'ի Մասրենի:

44. * Ակրկարհա.

Արաբացի անուն دقنقن , Արեւ ջարհա, Լ. Pyrethrum. Ռ. Пиретрум
ըստ Հայոց Իզաբողի տակ, կամ միայն Բողի տակ, այլ և Բողի տակ: Տես այս
բառերն ալ, բայց այլեւայլ տեսակ կամ ցեղ կու նշանակեն Ամիրտ. ոլվաթ և այլ
բժշկարանք. ըստ առաջնոյն, « ինքն Վայրի Տարդունին տակն է (զոր անուանէ
» Ասի Տարդուն). յորժամ բերանդ առնուս՝ մամրուայ»: Ուրիշ մի կ'աւելցընէ.
« Մուսուլցի Տարդունին տակն է ». իսկ հին բժշկարանն՝ համարի Կոտեմ:

45. Ակնեւտունկ.

« Ակնեւտունկ, կ'երգէ Դաւիթ Սալաձորցի, և Գառ-
նիդիմակն կարօտ են Մանիշկին տեսուն »: Ուրիշ օրինակ
մի գրէ Ակնտակ. ուրիշ մ'ալ Ականջուկ. բայց այս ետգրես
զրոյն իր կարծեօք գրած է:

46. Ակքան կամ Եկքան.

Այս անունս մեր Ս. Գրոց Թարգմանութեան մէջ
գտուի. (Գ. Թագր. 37, 9), յոյն բնագրին բառիս Καρδαν
Լ. Carduus. Փ. Chardon. Ռ. Болван , « Ակքան ի Լի-
» բանանէ յղեաց առ Եղեւնափայտն որ ի Լիբանան, և
» ստէ. Տուր զդուստր քո որդւոյ իմում կնութեան. և
» անցին գազանք անապատի որ ի Լիբանան, և կոխե-
» ցին զԱկքան »: Առակն կ'իմացընէ Ակքանի ցած ան-
պիտան բոյս մ'ըլլալն, այլ և փոտ: Դոյն առակն ուրիշ
տեղ կրկնուած (Բ Մնաց. 16, 18), թէ Ակքան և թէ
Որդոյ կ'անուանէ զբոյսն: Այս բանս մեկնելով Ս. Կիրեղ, ըստ
հայ Թարգմանութեան կ'ըսէ. « Ակքանն՝ բանջար ինչ
» է և կամ Թուփ փորթիկ, նման Մորի կամ Կարգան-
» նանն »: Իսկ մեր բաղմահմուտ Վանական վարդապետն
աւելի լաւ կու բացատրէ. « Ակքանն մանր Թուփ է, երեք



Ակքան *

* Ուր և է պատկեր բուսոյ՝ այս զրոց մէջ Եւրոպացաց ծանօթ հասարակ տեսակին է. կըրնայ
ըլլալ որ մեր 'երկրին մէջ նոյն անուամբ բոյսն քիչ մի զանազան տեղք ունենայ. փափաղելի է
որ ազգային բուսաբանք՝ անուանց նոտ պատկերն ալ ընծայեն:

» ազգ. է որ այլ կակուղ է և անփուշ, հետ գետնոյն տակի (գետնի վրայ կու
» տափկի, տարածուի). և է որ բարձրանայ կանդնալափ և փուշ ունի, զոր Գազ
» կոչեն և Հոսնի (Հոսի), լուցկին է այրելեաց. ի կարեաց ժամ՝ եզանց տան
» կերակուր, գիրանայ, բայց միան դառն լինի»:

47. Ակուսախոտ.

Ստեփ. Ռոյքեան Գալիենոսի բառից մէջ գտնէ զայս, և դնէ ի լատինն Calla.
այս բառս յունական կալլէոն (καλλαιον) բառէն առնուած է, որ պըլորի կտուցին
տակի մօտնը նշանակէ. և ըստ բուսաբանից Նուրիկ բուսոց (Aroidae) ցեղէն է:

48. Աղաբղբուկ.

Գալիենոսի բառից օրինակ մի կու գուգէ զայս՝ յունական Էռիսմոս կամ Էռիսքոս
տարակուսելի անուան. հաւանօրէն պիտի ըլլայ Աղբղբուկ, զոր տես քիչ մի վարը:
Սոյնպէս տարակուսելի է և

49. Աղալուհի.

Զոր՝ Փայտ Հարուսի գրած է բժշկարան մի:

* Աղաղիա.

Տես Ախախիա (Թիւ 28):

* Աղարիկոն կամ Ախարիկոն.

Տես Ղարիկոն:

